

Ժ2.00.01 – ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենդանիների ներքին ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և բուժման ընդհանուր հիմունքները:

Ընդհանուր կանխարգելիչ միջոցառումներ. դիսպանսերացում, կլինիկական և լաբորատոր հետազոտությունների արդյունքների վերլուծություն:

Ընդհանուր թերապիայի հիմունքներ. պատճառային, պաթոգենետիկ (ախտածնային), նշանային:

Կրուպոզ և օջախային պնևմոնիաներ: Թոքերի էմֆիզեմա, թոքամիզի բորբոքում:

Որոճողների նախաստամոքսների, ստամոքսի և աղիքների հիվանդություններ:

Երիկամների հիվանդություններ: Սրտի բորբոքային հիվանդություններ: Նյութափոխանակության հիվանդություններ: Նորածին մատղաշի դիսպեպսիա:

Հակամիկրոբային պատրաստուկներ: Կենտրոնական նյարդային համակարգը գրգռող և ընկճող դեղամիջոցներ: Առավելապես կենտրոնախույս նյարդավերջույթների հատվածում ազդող (խոլինոմիմետիկ, խոլինոլիտիկ, ադրենոմիմետիկ, ադրենոլիտիկ) դեղեր:

ԾՆՆԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ ԵՎ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԿԵՆՍԱՏԵԽՆԻԿԱ

Սեռական ցիկլ, դրա փուլերը և ֆենոմենները, սեռական ցիկլի տեսակային առանձնահատկությունները, դրա նյարդա-հումորալ կարգավորումը, սերմնավորման օպտիմալ ժամանակի որոշումը:

Սերմնահեղուկի ստացումը, դրա սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատումը:
Սաղմի փոխապատվաստում:

Հղիության ֆիզիոլոգիան: Պտղաթաղանթներ, պտղաջրեր, նրանց կենսաբանական նշանակությունը: Մայրական և պտղային պլացենտա:
Վիժումներ:

Ծննդաբերական ակտ, դրա փուլերը և տեսակային առանձնահատկությունները:

Ծննդօգնություն: Կեսարյան հատում, արգանդի պարանոցի և շեքահատում:

Հետծննդյան վեստիբուլտներ, վազինիտներ, մետրիտներ:

Մաստիտներ, դրանց դասակարգումը՝ շճային, կատարային, թարախային, արյունային և ֆիբրինոզային: Հատուկ մաստիտներ: Մաստիտների ախտորոշումը և բուժումը:

Անպտղության դասակարգումը: Բնածին, ծերունական, շահագործական, կլիմայական, կերային և արհեստական անպտղություններ:

Սիմպտոմատիկ անպտղություն: Միզասեռական նախադոան, հեշտոցի, արգանդի և ձվարանների խրոնիկ հիվանդություններ:

Ձվարանների ֆունկցիոնալ խանգարումները: Ձվարանների ատրոֆիան, սկլերոզը: Կայուն դեղին մարմին, անաֆրոդիզիա: Ձվարանների կիստա (ֆոլիկուլային և լյուտեինային), նիմֆոմանիա:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Օրգանիզմի ընդհանուր և տեղային ռեակցիաները տրավմայի նկատմամբ, ջերմային և քիմիական վնասվածքներ: Փակ և բաց մեխանիկական վնասվածքներ, ճողվածքներ: Օտար մարմիններն օրգանիզմում, մեռուկներ, խոցեր և խուղակներ: Արյունատար և ավշային անոթների, հանգույցների հիվանդություններ:

Մաշկի և մկանների հիվանդություններ: Նյարդերի հիվանդություններ, նորագոյացություններ: Վիրաբուժական ինֆեկցիա:

Գլխի և ծոծրակի հատվածի հիվանդություններ: Պարանոցի, մնդավի և կրծքի հատվածի հիվանդություններ: Հոդերի, որովայնի պատի և խոռոչի օրգանների հիվանդություններ:

Անասնաբուժական օրթոպեդիա: Անասնաբուժական օֆթալմոլոգիա:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱ

Ոսկրի անատոմիական, հյուսվածաբանական կառուցվածքը և դրա դերն ու նշանակությունը օրգանիզմում:

Գլխի կմախքի ոսկրների սաղմնային զարգացումը: Գանգի խոռոչի ձևավորումը և այդ ոսկրների կառուցվածքի նկարագրությունը:

Մկանի անատոմիական և հյուսվածաբանական կառուցվածքը, դրանց դերն ու գործունեությունը կենդանիների կանգնած և շարժման ժամանակ:

Մաշկային ծածկույթի և դրանց ածանցյալների մորֆոֆունկցիոնալ բնութագիրը: Մաշկայի գեղձերի և զգացողության կառուցվածքի նկարագրությունը:

Մարսողական օրգանների կառուցվածքի, տեղադրվածության, գործունեության նկարագրությունը և դրանց տեսակային ու հասակային առանձնահատկությունները:

Շնչառական ապարատի օրգանների անատոմիական կառուցվածքը, օրինաչափությունները կախված կատարած գործառույթներից և փոխկապվածությունը շրջակա միջավայրի հետ:

Միզային ապարատի օրգանների անատոմիական կառուցվածքի և ֆունկցիոնալ օրինաչափությունները կապված դրանց կատարած գործառույթներից: Նեֆրոնի մակրոմիկրոսկոպիկ կառուցվածքի համեմատական նկարագրությունը:

Արյան և ավշային շրջանառության օրգանների անատոմիական կառուցվածքը: Սրտի կառուցվածքը և տեղադրվածությունը:

Արյունաստեղծ օրգանների և ավշային հանգույցների կառուցվածքը, դրանց նշանակությունը օրգանիզմում:

Գանգոլեղի և ողնուղեղի ընդհանուր բնութագիրը: Կիսագնդերի կեղևի հյուսվածաբանական կառուցվածքը:

Վեգետատիվ նյարդային համակարգի ընդհանուր բնութագիրը: Սիմպաթիկ և պարասիմպաթիկ նյարդային կենտրոնների տեղադրվածությունը և դրանց նշանակությունը:

Զգայարանների (տեսողական, լսողական) ընդհանուր բնութագրությունը և դրանց դերն ու նշանակությունը օրգանիզմում:

Թռչունների մարսողական, շնչառական և սեռական ապարատների նկարագրությունը և կառուցվածքային առանձնահատկությունները կաթնասունների համեմատ:

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ

Նեկրոզի և ապոպտոզի պաթոմորֆոլոգիան: Արյան և ավշային շրջանառության խանգարումներ: Դիստրոֆիաների պաթոմորֆոլոգիան: Սուր և խրոնիկական բորբոքումների ախտաճնությունը:

Ուռուցքների հյուսվածքագոյացում: Իմունաբանական ռեակցիան ուռուցքի հակաժինների նկատմամբ: Ուռուցքների ձևաբանությունը:

Փոխհատուցման և հարմարողական պրոցեսներ:

Սուր բակտերիալ ինֆեկցիաների ախտաբանական ձևակազմագիտությունը:

Վիրուսային և սնկային հիվանդությունների ախտաբանական ձևակազմագիտությունը:

Խրոնիկական հիվանդությունների ախտաբանական ձևակազմագիտությունը:

Պարագիտային հիվանդությունների ախտաբանական ձևակազմագիտությունը:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինֆեկցիայի և իմունիտետի համաճարակաբանական ասպեկտները, համաճարակաբանական պրոցես և դրա կենսաբանական շարժիչ ուժերը:

Ինֆեկցիոն հիվանդությունների էվոլյուցիան և դասակարգումը, հիվանդությունների համաճարակային օջախավորումը:

Սիբիրախտ: Բոտուլիզմ: Տուբերկուլոզ: Բրուցելոզ: Դաբադ: Կատաղություն: Ծաղիկ: Խշխշան պալար:

Խոզերի դասական և աֆրիկական ժանտախտներ:

Սալմոնելոզ, կոլիբակտերիոզ, անաերոբային դիզենտերիա:

Թռչունների հիվանդություններ՝ գրիպ, ծաղիկ, Նյու-կասսյան հիվանդություն, լեյկոզներ, Մարեկի հիվանդություն:

ՄԱԿԱՐՈՒԾԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՎԱԶԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարագիտիզմի առաջացումը և բնության մեջ տարածումը: Մակաբույծների տեսակները՝ արտաքին և ներքին մակաբույծներ, ժամանակավոր և մշտական մակաբույծներ:

Բնության մեջ օրգանիզմների փոխհարաբերության ձևերը: Տիրոջ օրգանիզմի վրա մակաբույծի ազդեցության տեսակները: Ինվազիոն հիվանդությունների համաճարակաբանական արտահայտման ձևերը:

Ֆասցեղիոզներ, դիկրոցելիոզ: Տավարի և խոզերի ցիստիցերկոզներ: Էխինոկոկոզ և ալվեոկոկոզ: Ուղեղային ցենուրոզ, մոնեզիոզներ: Մսակերների դիֆլոբոթրիոզ, ձկների լիզոկիդոզներ: Կենդանիների ասկարիդոզներ: Տրիխինելոզ: Պիրոպլազմիդոզներ:

Պարագիտոֆորմային տղեր և դրանց նկատմամբ իրականացվող պայքարի միջոցառումները:

ԱՆԱՏՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Մսի արդյունաբերության հումքը, սպանդի ենթակա կենդանիների ընդհանուր բնութագրությունը, սպանդի ենթակա կենդանիների բտվածության որոշումը, կենդանիների նախապատրաստումը սպանդի համար: Կենդանիների սպանդը, կենդանիների շմեցումը և արյունաքամելը:

Սպանդի ենթակա կենդանիների ընդունումը, նախասպանդային պահվածքը և անասնաբուժասանիտարական զննումը: Վակցինացված կենդանիներին սպանդի թույլ տալու անասնաբուժական կարգը: Նախասպանդային զննման հաշվառումը:

Մսի դասակարգումն ըստ կենդանատեսակների, կենդանիների հասակի, սեռի, բտվածության, ջերմային վիճակի, սննդային նշանակության: Մսի կարգերի որոշումը:

Մսեղիքի և օրգանների հետսպանդային փորձաքննության կազմակերպումը և մեթոդիկան: Ավշային համակարգի դերը մսի փորձաքննության ժամանակ: Մսեղիքի և օրգանների անասնաբուժասանիտարական զննման մեթոդիկան: Մսի պիտակավորումը: Հետսպանդային փորձաքննության արդյունքների գրանցումը:

Մսեղիքի և սպանդի այլ մթերքների սանիտարական փորձաքննությունը վարակիչ հիվանդությունների ժամանակ (սիբիրախտ, տուբերկուլոզ, բրուցելոզ, լեպտոսպիրոզ, դաբաղ, ծաղիկ, տուլարեմիա, խոզերի կարմրախտ, լիստերիոզ, քյու- դենտ, խլախտ, տավարի ժանտախտ, խշխշան պալար, թոքատապ, տավարի պարատուբերկուլոզային էնտերիտ, պսևդոտուբերկուլոզ, ակտինոմիկոզ, բոտրիոմիկոզ, չարորակ այտուց, տավարի չարորակ հարբուխային տենդ, պաստերելոզ, նեկրոբակտերիոզ, կարկամախտ, կոլիբակտերիոզ, հորթերի պարատիֆ, խոզերի

Ժանտախտ, խոզերի վարակիչ ատրոֆիկ ռինիտ, խոճկորների պարատիֆ, Աուեսկի հիվանդություն, Տեշենի հիվանդություն, խոզերի գրիպ, ոչխարների և այծերի ինֆեկցիոն ագալակտիա, ոչխարների բրադզոդ, ոչխարների ինֆեկցիոն էնտերոտոքսեմիա, ճագարների պնևմոնիա, ճագարների թարախային պլևրիտ, թռչունների ժանտախտ, թռչունների սպիրոխետոզ, թռչունների ծաղիկ, թռչունների պարատիֆ, հավերի ինֆեկցիոն լարինգոտրախետիտ, թռչունների տիֆ):

Մսեղիքի և սպանդի այլ մթերքների սանիտարական փորձաքննությունը մակաբուծային հիվանդությունների ժամանակ (տրիխինելոզ, տավարի ցիստիցերկոզ, խոզերի ցիստիցերկոզ, էխինոկոկոզ, ֆասցելոզ, դիկրոցելոզ, սարկոսպորիդոզ, լիզվատալիոզ, նրբավիզ ցիստիցերկոզ, ոչխարների ցիստիցերկոզ, եղջերուների ցիստիցերկոզ, պտտախտ, նեմատոդոզներ, պիրոպլազմոզ, բաբեզիլիոզ, նոտալիոզ, թեյլերիոզ, անապլազմոզ, կոկցիդիոզ):

Մսի պահածոյացման ջերմաստիճանային և աղային եղանակները: Մսի պահածոյացման նոր ֆիզիկական մեթոդները:

Երշիկային մթերքների անասնաբուժական սանիտարական փորձաքննությունը, դրանց արտադրման հիգիենան:

Կաթի կազմը և հատկությունները, կաթի և կաթնամթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննությունը:

Ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննությունը:

Ձկան վերամշակման տեխնոլոգիայի հիմունքները և անասնաբուժասանիտարական փորձաքննությունը: Ձկների հիվանդությունները և անասնաբուժասանիտարական գնահատականը:

Բուսական ծագման սննդանյութերի սանիտարական փորձաքննությունը: Թարմ և չորացված արմատապալարապտուղների, բանջարեղենի, մրգերի սանիտարական փորձաքննությունը: Աղադրված բուսական

աննդամթերքների և սնկերի փորձաքննությունը: Մեղրի սանիտարական փորձաքննությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Գ.Ս., Մանասյան Ա.Վ., Նիկողոսյան Ա.Ն. «Գյուղ. Կենդանիների ներքին ոչ վարակիչ հիվանդություններ», դասագիրք, Երևան, 2000թ.
2. Щербаков Г.Г., Коробов А.В. и др., «Практикум по внутренним болезням животных», Санкт-Петербург, Москва, Краснодар, 2003г.
3. Աղամյան Ֆ.Բ. «Անասնաբուժական դեղաբանություն», Երևան, ՀՊԱՀ, 2012թ.
4. Субботин В.М., Александров И.Д. «Ветеринарная фармакология», Москва, 2004г.
5. Ստուդենցով Ա.Պ. «Անասնաբուժական ծննդագիտություն և գինեկոլոգիա», Երևան, 1950թ.
6. Никитин В.Я., Миролюбов М.Г. «Ветеринарня акушерство, гинекология и биотехника размножения», Москва, 2000г.
7. Шипилов В.С., Зверева Г.В. «Практикум по акушерству, гинекологии и искусственному осеменению с.х. животных», Москва, 1988г.
8. Մկրտչյան Բ.Լ. «Ընտանի կենդանիների օպերատիվ վիրաբուժություն», Երևան, 1975թ.
9. Մանվելյան Մ.Պ., Մարգարյան Գ.Պ. «Անասնաբուժական վիրաբուժություն, 1-ին մաս. Ընդհանուր վիրաբուժություն», Երևան, 1986թ.
10. Մանվելյան Մ.Պ., Մարգարյան Գ.Պ. «Անասնաբուժական վիրաբուժություն, 2-րդ մաս. Մասնավոր վիրաբուժություն», Երևան, 1977թ.
11. Մարգարյան Գ.Պ. «Անասնաբուժական վիրաբուժություն, 3-րդ մաս. Անասնաբուժական օրթոպեդիա և օֆթալմոլոգիա», Երևան, 1987թ.
12. Петраков К.А., Саленко П.Т. «Оперативная хирургия с топографической анатомией животных», Москва, 2001г.
13. Հարությունյան Պ.Ի. «Ընտանի կենդանիների մարսողական օրգանների անատոմիայի ձեռնարկ», Երևան, 1986թ.
14. Հարությունյան Պ.Ի. «Ընտանի կենդանիների անատոմիա», 1-ին և II-րդ մասեր, Երևան, 1990թ.

15. Մխիթարյան Ռ.Ս., Հովսեփյան Ա.Ա., Միրզոյան Մ.Գ. «Ընդհանուր հյուսվածաբանություն», Երևան, 2007թ.
16. Ազնաուրյան Ա.Զ., Մխիթարյան Ռ.Ս., Կոբեյյան Ս.Խ., Գրիգորյան Ն.Խ. «Ընտանի կենդանիների անատոմիա: Մարմնական համակարգ I-ին մաս» դասագիրք, Երևան, 2013թ.
17. Մխիթարյան Ռ.Ս., Գրիգորյան Ն.Խ., Կոբեյյան Ս.Խ. «Ընտանի կենդանիների անատոմիա: Ընդերաբանություն II -րդ մաս» դասագիրք, Երևան, 2014թ.
18. Жаров А.В., Шишков В.П. «Патологическая анатомия сельскохозяйственных животных», Москва, Колос, 1999г.
19. Жаров А.В. «Вскрытие и патоморфологическая диагностика болезней животных», Москва, Колос, 2000г.
20. Վարդազարյան Ն.Դ. «Պաթոլոգիական անատոմիա», Երևան, 2006թ.
21. Գրիգորյան Ս.Լ. «Գյուղատնտեսական կենդանիների համաճարակաբանություն և ինֆեկցիոն հիվանդություններ», Երևան, 2002թ.
22. Сидорчук А.А., Воронон Е.С., Глушков А.А., Макаров В. «Общая эпизоотология», Москва, 2004г.
23. Сидорчук А.А. «Инфекционные болезни животных», Москва, 2007г.
24. Նաղաշյան Հ.Զ. «Մակարոձաբանություն և կենդանիների ինվազիոն հիվանդություններ», Երևան, Սարվարդ, 2003թ.
25. Г.Уркхарт и другие «Ветеринарная паразитология», Москва, Аквариум, 2000г.
26. Акбаев М. «Паразитология и инвазионные болезни», Колос, 2000г.
27. Արրահամյան Վ., Համբարձումյան Գ., Հարությունյան Ժ., Խաչատրյան Ն. «Պարենամթերքի փորձաքննության հիմունքներ», Երևան, 2008թ.
28. Մարմարյան Յու.Գ. «Անասնաբուժական մթերքների և հումքի ապրանքագիտություն», Երևան, Ասողիկ, 2002թ.
29. Սահրադյան Ս.Ի. «Պարենային ապրանքների փորձաքննություն», Երևան, 2010թ.
30. Боровиков М.Х. и другие «Ветеринарно-санитарная экспертиза с основами технологии и стандартизации продуктов животноводства», Москва, 2007г.

